№ 168 Սեպտեմբերի 24 (Հոկտեմբերի 6) 1880 Սեպտեմբերի 24 (Հոկտեմբերի 6) № 168

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածումներ: — Ներքին տեսութիւն: Նամակ Աէքսանդրապօլից: Նամակ Շուշուց: Ներքին լուրեր:— Արտաքին տեսութիւն: Արևելեան գործեր: Թիւրքիա: Արտաքին լուրեր:— «Մշակի» խեղագիրներ: — Յայտարարութիւններ:— Բանասիրական: Գրական մամուլ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԳՆԵՐ

Թիւրքիան կրկին ճգնաժամի մէջն է: Լեռագիրը մեզ տեղեկացրեց որ մեծ պետութիւնների վերջին գրութիւնը այնպիսի տրպատրութիւն ունեցաւ սուլթանի վրա, որ նա այժմ անդամալոյծ լինելու մօտ դրութեան մէջ է, փախենում են խռովութիւնների պալատի մէջ. սուլթանի այժմեան դրութիւնը յիշեցնում է Աբդուլ-Ազիզի թագաւորութեան վերջի օրերը:

Բացի սորանից լրագիրները հաղորդում են, որ Ձերնօգորիայում շարժում է նշմարվում Դուլցինիօ չը յանձնելու պատճառով, ալբանացիներն էլ կրաբեցին բոլոր յարաբերութիւնները Ռիզա-փաշայի հետ, Յունաստանում մի առանձին պատերազմական ոգևորութիւն է տիրում, Արաբիայում ապստամբութիւնը չէ զսպվել, վերջապէս և Հայաստանում շարժում է սկսվել, եթէ ոչ թիւրքաց կառավարութեան դէմ, գոնէ թափառական և հարստահարող քիւրդ ցեղերի դէմ: Հայաստանի շարժումը չունի թէև յարձակողական բնաւորութիւն, այլ միայն պաշտպանողական, բայց թիւրքիայի մնացած երկիրների շարժման հետ միասին՝ ստանում է մի առանձին նշանակութիւն, աւելացնելով պետութեան ընդհանուր ճգնաժամին մի նոր դժուարութիւն:

Այդ բոլոր չարագուշակ երևոյթներին պէտք է աւելացնենք և այն, որ, ինչպէս տեղեկացնում է մեզ Լեռագիրը, մեծ պետութիւնների համաձայնութիւնը արևելեան խնդրի վերաբերութեամբ տուել և տալի սերտ է դառնում, և մինչև անդամ լուր կայ որ պետութիւնները չեն բաւականանայ հասարակ ծովային ցոյցով, այլ եթէ Բ. Դուռը կընդիմանայ պետութիւնների պահանջներին Ձերնօգորիայի, Յունաստանի և Հայաստանի խնդիրները անյապաղ լուծելու, եւրօպական մեծ պետութիւնները ուղարկելու են իրանց նաւատորմը Դարդանէլեան նեղուցը և ձեռնամուխ կը լինեն վճռողական և խիստ միջոցների:

Ահա այս տեսակ լարված դրութեան, ճգնաժամի մէջն է գտնվում այժմ Օսմանեան պետութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

Սեպտեմբերի 12-ին

Դարերի ընթացքում հայ ազգը սիստեմաթիկապէս պակասեց, սպառվեց մի պատճառով, այն է կրօնական նեղ անհանդուրժողութիւնից դրված եղբայրատեցութեամբ: Այդ յատկութիւնը այն ատոհման ընդհանրացած է ազգութեան մէջ, որ կարելի է ժառանգական բնաւորութիւն համարել, որ շարունակ երևում է Նորա կեանքի ընթացքում: Ցաւալի է, երբ այդպիսի կործանիչ զգացմունքով լցվիշտակվում է հայը այն ժամանակ, երբ որ Նրան անհրաժեշտ է խաղաղ և ներողամիտ ճշմարիտ եղբայրական համակրութիւնը դէպի կրօնաբաժան կուսակցութիւնները: Կարելի է մոռանալ այն պատմական ճշմարտութիւնը, որ կրօնական վիճաբանութիւնները և եղբայրական մոլեռանդ հալածանքները միշտ աւերել և քանդել են ազգայնութեան սիւնը, որից և հայ ազգը ապատ չը մնաց: Կրօնական վիճաբանութիւնների արդիւնքը շատ զզալի է հայ ազգի համար. նա այժմ ունի իր կազմակերպութեան մէջ երեք առանձնացած կրօնական կուսակցութիւններ: Այդ բաւական է մեզ յիշեցնելու և մտաբերելու այն անհամար տխուր արկածները, որոնք անցան և պէտք է անցնեն հայ ազգի դլխից կրօնական երկպառակութեանց պատճառով: Արտաքին քաղաքական ճնշումները չեն կարող այնքան վնասել ազգի գոյութեանը, որքան ներքին թշնամութիւնը, դաւանանութիւնը և եղբայրատեցութիւնը: Մեր լուսաւորչական, կաթոլիկ և աւետարանական եղբայրները պէտք է հրաժարվեն եղբայրատեցութիւնից: Հայը այսօր պէտք է մտածէ միմիայն հայութեան վրա, հայը պէտք է մտածէ Թիւրքաց Հայաստանի ներկայ վիճակի և նրա ապագայի վրա, ամեն ոք, եթէ նա հայ է, պէտք է անկեղծօրէն սիրէ հայութիւնը, և ցանկայ նրա յաջող ապագան: Մեր առաջ դայ գործելու մի լայն ասպարէզ: Այդ ասպարէզը մեր ժողովրդի տնտեսական և մտաւոր շահերի մշակութեան գործն է: Գիլտառրապէս հայ ազգի անշրաժեշտ պահանջը ներկայումս, ազգային զգացմամբ միութիւն է: Այդ նպատակը բաւական է մեզ համար աշխատելու. պէտք է ազգութեան գաղափարը նոր, թարմ, ժամանակակից պահանջների համեմատ ընդհանրացնել ամբոխի մտածումների մէջ, աշխատել միացնել բաժանած ոյժերը մի մարմնի մէջ: Կրօնական վիճաբանութիւնները մեզ երբէք մի որոշ նպատակի չեն հասցնի, այդ չարցով պարապելով մոլեռանդութիւնից երբէք դուրս չենք դայ: Մեր հանգիստը կարող ենք գտնել եղբայրական ներողամտութեան մէջ: Կրօնական միակողմանի դաստիարակութիւնը ունեցել է և ունի իր դառն հետևանքները, որոնցից, դժբաղդաբար, մենք կաթոլիկ հայերս էլ կատարելապէս ազատ չենք: Հաւատար պէտք է պահպանենք և կրօնի և ազգութեան պատկառելի նշանակութիւնները, չը պէտք է ատենք այն հային, որ մտածում է հայութեան վրա: Դաւաճան է այն հայը, որը կրօնի պատրուակով երկպառակութիւն է սերմանում հայ դերդաստանի մէջ: Հայ ազգի թէ որքան խարխլան էին այդ ենթադրութիւնները, կարող է հասկանալ ամեն մի մարդ, որ փոքր ի շատէ տեղեկութիւն ունի ասիական Թիւրքիայի դրութեան վրա: Մաշմտականները պտտեղ նոյնքան ճնշված, նոյնքան հարստահարված են անկարգ կառավարութիւնից, որքան քրիստոնեաները: Մաշմտականները աւելի ևս ցանկանում են մի բարեկ կառավարութիւն, և գրան ապացոյց կարող է լինել գեռ չը զսպված Մուսթէֆիկի պարտերի ապստամբութիւնը, Ղազան-դաղլիների ապստամբութիւնը և այն վերանորոգութիւնները, որ պահանջում էր Միդհատ-փաշան Սիրիայի համար, որը յանկարծ Սեամ մեռնելու Բ. Դուռից:

Մաշմտական մոլեռանդութիւնը մի խրատիչ է, որով Բ. Դուռը աշխատում է միշտ վախեցնել Եւրօպային: Այնքան խօսվում է Հայաստանի վերանորոգութիւնների, Հայաստանի ինքնավարութեան մասին,— այնքան բացատրութիւններ են տրվում Բ. Դրան կողմից, բայց որքան հայկական լեռների դայլերը տեղեկութիւն ունեն այդ բոլոր բանակցութիւնների մասին, նոյնքան տեղեկութիւն ունի քուրդ ժողովուրդը: Այդ բոլորը խօսվում, շինվում, սարքվում են Կ. Պօլսում: Քուրդին ինչով կարող են հետաքրքրել Հայաստանի ինքնավարութիւնը կամ այնտեղ մտցնելու վերանորոգութիւնները: Նա ոչ լրագիր է կարդում և ոչ գիտէ, թէ ինչ է կատարվում իր բնակած լեռների միւս կողմում:

Այստեղ մենք Բ. Դրանը նպաստաւոր էր ցոյց տալ մի քաղաքական միութիւն, եթէ նա դոյութիւն չունէր. պէտք էր յայտնել, թէ կարող է կազմվել, որպէս այդ ենթադրում է «Օսմանլի» լրագիրը:

Արդեօք կարող է կազմվել,— ահա այդ հարցը պարզելու համար մենք հարկաւոր ենք համարում դատապարտել «վայրենի» հայերին, որոնք «բաբ-բարոտաբար» հարստահարում էին «խեղճ» քրդերին, այլ խօսքով, սկսեց բողոքել գառների դէմ, որ գիշատում էին գայլերին...

Դեռ Բ. Դուռը չէր տուած դեսպանների միաբան գրութեան պատասխանը Հայաստանի վերանորոգութիւնների մասին, յանկարծ Կ Պօլսում յայտնվեցան քուրդ պատուիրակներ, իբր Նէյխ-Իբրադիլաշի *) կողմից ուղարկված, բայց իսկապէս թիւրքաց մայրաքաղաքի մէջ սարքված) որոնք ներկայանալով Աբէդին-փաշային, պահանջում էին քրդերի և Քրդստանի (անունը փոխած Հայաստանն) համար ինքնավարութիւն:

Ինչ էր նշանակում այդ աչքակապութիւնը:

Հարցը շատ պարզ է: Թողը Հայաստանի (թիւրքերի հայացքով Քրդստանի) ինքնավարութեան և նրա վերանորոգութիւնների վրա էր: Եթէ պէտք էր տալ այդ երկրին ինքնավարութիւն, ինչու չը տալ քրդերի անունով, որոնք այդ երկրի տէրն էին, որոնք այդ երկրի նախկին ընակիչներն էին և որոնք իրանց կուլտուրայով բարձր էին միւս բոլոր ազգայնակութիւններից, առաւելապէս հայերից ...

Եւրօպական դեսպանները, ի հարկէ, ուշադրութիւն չը դարձրին Աբէդին-փաշայի այդ ֆոկուսների վրա և քուրդ պատգամաւորութիւնը ոչինչ հետևանքի չը հասաւ:

Դրանից յետոյ ալբանական մուսլման հեղինակը, Աբէդին-փաշան, սկսեց քրդական միութեան վրա երազել: Այդ միջոցին թուրք մամուլը հետևաբար իր խօսքը փոխել սկսեց: Այժմ քրդերին մի կուլտուրական, զարգացած, խաղաղասէր և բարոյական ժողովուրդ ներկայացնելը շատ ձեռնտու չէր կարող լինել: Նոյնպէս ձեռնտու չէր ասել, թէ քրդերը այն ատոհման բարի, առաքինի և խեղճ են, որ հարստահարվում են «վայրենի» հայերից: Պէտք էր ներկայացնել նրանց որպէս անգութ գազաններ, որպէս բարբարոս ֆանատիկոսներ, որոնք պատրաստ են մի րոպէում ոչնչացնել լ ը ր հայերին, եթէ նրանց ինքնավարութեան վրա խօսք կը լինէր:

Այդ բոլորի մէջ այն միտքը կար, որ Եւրօպային ցոյց տային, թէ Բ. Դուռը հակառակ չէ Հայաստանում վերանորոգութիւններ մտցնելու առաջարկութեանը, և նա ինքը շատ ցանկանում է կատարել այդ, բայց նա ունի իր առջև մի մեծ դժուարութիւն, և այդ դժուարութիւնը կայանում է քրդերի ու առհասարակ մաշմտական ամբոխի մոլեռանդութեան մէջ, որոնց կրոնին և սովորութիւններին հակառակ է ամեն մի վերանորոգութիւն: Կամենում էին ցոյց տալ, եթէ կաւատրութիւնը մաշմտական ժողովրդի կամքի հակառակ գնար, կարող էր պատճառ տալ մի մեծ կոտորածի քրիստոնէից դէմ, որի համար Բ. Դուռը դժո արանում էր իրան պատասխանատու համարել:

*) Նէյխ-Իբրադիլաշը, Թիւրքիայի քրդերի այդ կեղծ ներկայացուցիչը, իսկապէս պարզից հպատակ մի քուրդ ցեղի չէին է, այսինքն մոլլան կամ հոգեորականը: Նա ինքը և իր ցեղը թափառում են պարզից երբեմն Ուշնի, երբեմն Թաբ-գառառի և երբեմն Մար-գառառի կողմերում: Ռուս-Թուրքական պատերազմի ժամանակ Բայազէդի վրա յարձակվող քուրդ հրոսակներից մէկի առաջնորդն էր նա: Այստեղ նշանակութիւն ստացաւ և Թուրքաց կառավարութեան ուշադրութիւնը դարձրեց իր վրա: Այն ժամանակ, երբ Կ. Պօլսում յայտնվեցան իբր նրա կողմից պատուիրակներ, նա Պարսկաստանումն էր և դուցէ ամենևին տեղեկութիւն չուներ, որ իր անունով բանակցութիւններ են լինում Բ. Դրան հետ: «Մշակի» № 167 տեսնում ենք, որ Նէյխ-Իբրադիլաշը Պարսկաստանի Սօվուկ-Բուլաղ գաւառումն է սկսել իր անկարգութիւնները: